



« ---- »----- 2010 թ.

Հաստատում եմ
Ալավերդու Օրհուս կենտրոնի փորձագետների խորհրդի
նախագահ, Ալավերդու քաղաքապետ Ա. Նալբանդյան

ԱԼԱՎԵՐԴՈՒ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ


Էկոլոգիական տեղեկատվության հասարակական կենտրոն

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հունվար - Հունիս

Ալավերդու էկոլոգիական տեղեկատվության հասարակական (Օրհուս) կենտրոնը 2010 թ հունվար – հունիս ամիսներին իրականացրել է մի շարք միջոցառումներ՝ իր, այլ կազմակերպությունների, ՏԻՄ – երի եւ հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ եւ մասնակցությամբ: Հաշվետու ժամանակահատվածում Ալավերդու Օրհուս կենտրոնի նախաձեռնությամբ անցկացվել է 26 միջոցառում,

Կենտրոնի համակարգողները մասնակցել են այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված միջոցառումների: Նշված ամիսների ընթացքում կենտրոնում անընդհատ եղել են ֆիլմերի ցուցադրություններ, տրամադրվել են ֆիլմեր նաեւ տեղական հեռուստաընկերությանը, ում հետ ակտիվ համագործակցում է կենտրոնը, կրթօջախներին եւ հասարակական կազմակերպություններին: Կենտրոնը ակտիվորեն մասնակցում է տարածաշրջանում եվ համայնքում իրականացվող դրամաշնորհային բնապահպանական ծրագրերի իրականացման գործընթացին՝ ավելին <<Green Lane>> ՀԿ-ի հետ հանդիսանում է ԵՄ աջակցությամբ՝ CENN, REC Caucasus –ի հետ համատեղ իրականացվող ծրագրի Հայաստանյան կորորդինատորը տարածաշրջանում, ԵԱՀԿ –ի հայտարարած <<Անվտանգ միջավայր>> ծրագրի համակարգողն է: Կենտրոնի հետ ակտիվ համագործակցում են նաեւ Թումանյան, Ախթալա, Շամլուղ քաղաքներն ու գյուղական համայնքները: Կատարված բոլոր աշխատանքները լուսաբանվել են ՋԼՄ-ների միջոցով՝ մասնավորապես տեղական <Անկյուն գունարած 3> հեռուստաընկերություն, hetq.am: Կենտրոնը հունվար – հունիս ամիսներին ունեցել է 293 այցելու, որոնցից 17 %-ը ՀԿ-ների ներկայացուցիչները, 34 %-ը՝ պատանիները ու երիտասարդները, 11 %-ը՝ ՏԻՄ ներկայացուցիչները, 28 %-ը՝ հասարակության ներկայացուցիչները, 10 %-ը՝ ՋԼՄ-ների ներկայացուցիչները:



Այցելուներն անընդհատ օգտվում են կենտրոնի բոլոր ծառայություններից: Կենտրոնն ունի 12 կամավոր: Կատարված աշխատանքներն են՝

	Միջոցառման անվանում, մասնակիցներ	Նպատակը և ակնկալվող արդյունքները	Կատարող
	<i>Հունվար</i>		
1	Բաց դաս հողերի դեգրադացիայի, քիմիական աղտոտման վտանգի թեմաներով, թեմատիկ ֆիլմերի դիտում, կենտրոնի կամավորների մասնակցությամբ	Էկոկրթության մակարդակի բարձրացում	համակարգողներ Ռուզաննա Միրզոյան, Անուշ Էվոյան

2	<p>Սեմինար Ախթալա, Թումանյան, Շամլուղ, Դսեղ, Քարինջ համայնքների շահագրգիռ ներկայացուցիչների հետ` հողի դեգրադացիայի թեմայով</p>	<p>տեղային քարտեզների մշակում մասնակիցների կողմից, ներկայացում, քննարկում, վերլուծական աղյուսակների քննարկում, հանդիպումից հետո հարցաթերթիկների լրացում</p>	<p>համակարգողներ Ռուզաննա Միրզոյան, Անուշ Էվոյան</p>
3	<p>Հանդիպում Օրիուս կենտրոնի էլեկտրոնային գրադարանի, ֆիլմադարանի, ուսումնամեթոդական, վիդեո և աուդիո նյութերի, տեխնիկական սարքավորումների վիճակը և նրանց արդյունավետ շահագործման խնդիրները` կենտրոնի կամավորների եւ փորձագետների խորհրդի ներկայացուցիչների մասնակցությամբ</p>	<p>Կենտրոնի աշխատանքների արդյունավետության բարձրացում</p>	<p>համակարգողներ Ռուզաննա Միրզոյան, Անուշ Էվոյան</p>
4	<p>Սեմինար Հողերի դեգրադացիայի մեղմացման և Հարավային Կովկասում աղքատության դեմ պայքարի համար հողային ռեսուրսների կայուն կառավարում ծրագրի շրջանակներում Շնող,Նեղոց, Թեղուտ, Մարց, Շամուտ համայնքներում</p>	<p>Անհրաժեշտ տեղեկատվության ձեռք բերում, տեղային քարտեզների մշակում մասնակիցների կողմից, ներկայացում, քննարկում, վերլուծական աղյուսակների քննարկում</p>	<p>«Կանաչ արահետ»-ի կողմից համակարգողներ Ռուզաննա Միրզոյան, Անուշ Էվոյան</p>
	<p>Փետրվար</p>		
5	<p>Սեմինար Մադան, Սանահին, Ակներ գյուղական թաղամասերում բնակիչների մասնակցությամբ` տեղական կենսառեսուրսների գնահատում եվ</p>	<p>Ծանոթանալ խնդիրներին, արդյունավետ կառավարման հնարավոր մեխանիզմների բացահայտում</p>	<p>«Կանաչ արահետ»-ի կողմից համակարգողներ Ռուզաննա Միրզոյան,</p>

	վերլուծություն, հողային պաշարների խնդիրների վերաբերյալ թեմաներով		Անուշ Էվոյան
6	Ճանաչողական այց Ալավերդու Պետական Պատկերասրահ, միջոցառում «Մարդ եւ շրջակա միջավայր. ներդաշնակություն» թեմայով, շնորհալի երեխաների երաժշտական, գեղարվեստական եւ ասանունքի ներկայացման միջոցով	Էկոլոգիական կրթվածության մակարդակի բարձրացում, էկոլոգիական մտածելակերպի խթանում	Ալավերդու Պետական Պատկերասրահ համակարգողներ Ռուզաննա Միրզոյան, Անուշ Էվոյան
7	Սեմինար Ալավերդի եւ Աքրի համայնքներում հողի դեգրադացիայի տեղեկանքների վերլուծություն	Տվյալների բազայի ստեղծում, խնդիրների վերլուծություն	«Կանաչ արահետ» իկ համակարգողներ Ռուզաննա Միրզոյան, Անուշ Էվոյան
8	Հանրային քննարկում «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի շրջանակներում՝ դպրոցների տնօրենների, տարածաշրջանի համայնքապետերի եւ ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի մասնակցությամբ	Հանրության իրազեկում օրենքի վերաբերյալ, հանրային հանրային միջոցները տնօրինողներին հաշվետու լինելու պատասխանատվության բարձրացում	համակարգող Անուշ Էվոյան
9	Սեմինար հանդիպում «Արտակարգ իրավիճակների արագ արձագանքման մեխանիզմներ» թեմայով՝ ՏԻՄ ներկայացուցիչների, իկ-ների, ՋԼՄ, համայնքի բնակիչների մասնակցությամբ	Արտակարգ իրավիճակների դեպքում արագ արձագանքման հանձնախմբի ստեղծում	GTZ, «Կարմիր խաչ», Լոռու մարզի Փ/Ծ
10	Կենտրոնի փորձագետների խորհրդի նիստ	Կենտրոնի հետագա աշխատանքների քննարկում	համակարգողներ Ռուզաննա Միրզոյան, Անուշ Էվոյան
	Մարտ		
11	Ճանաչողական այց ՀՀ Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանի Սանիտարահիգիենիկ	Մասնակիցներին ծանոթացնել սանեպիդկայանի աշխատանքներին եւ ուսումնասիրություններին	համակարգողներ Ռուզաննա Միրզոյան,

	ծառայության տեսչության Ալավերդու կայան՝ դպրոցականների, ՀԿ ներկայացուցիչների եւ կենտրոնի կամավորների մասնակցությամբ		Անուշ Էվոյան
12	Մարտի 22 –ի Ջրի համաշխարհային օրվան նվիրված միջոցառումների շրջանակներում կլոր սեղան եւ թեմատիկ ֆիլմի ցուցադրություն «Մաքուր ջուր առողջ աշխարհի համար» կարգախոսով՝ ջրմուղի, պետական հիգիենիկ և հակահամաճարակային վարչության Ալավերդու մասնաճյուղի, ՀԿ, ՋԼՄ, ՏԻՄ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, ազգային փոքրամասնությունների, բիզնես սեկտորի ներկայացուցիչների մասնակցությամբ	Հասարակության տեղեկացվածության մակարդակի բարձրացում ՀՀ ջրային ռեսուրսների, դրանց կառավարման, ջրի որակի հետ կապված խնդիրներին	համակարգողներ Ռուզաննա Միրզոյան, Անուշ Էվոյան
13	Հիդրոօդերևութաբանության համաշխարհային օրվա կապակցությամբ ճանաչողական այց Հայէկոմնիտորինգի Ալավերդու լաբորատորիա քաղաքի ուսանողների եւ կրթական ոլորտի ներկայացուցիչների մասնակցությամբ	Էկոկրթության մակարդակի բարձրացում	համակարգողներ Ռուզաննա Միրզոյան, Անուշ Էվոյան
14	«Անվտանգ միջավայր» դրամաշնորհային ծրագրի շնորհանդես ՝ ակտիվ հասարակության, ՀԿ-ների, միջազգային կազմակերպությունների, ԵԱՀԿ փոխդեսպանի, ՋԼՄ եւ այլ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ	Ծրագրի ներկայացում՝ խնդիրը, նպատակը, գործողությունները, արդյունքը	«Անահիտ» կանանց աջակցության կենտրոնի , համակարգող Անուշ Էվոյան
	Ապրիլ		
15	Թռչունների համաշխարհային օրվա կապակցությամբ ակցիա «ճանաչիր քո հայրենի եզերքը» թեմայով, Ալավերդու երիտասարդական միության եւ կենտրոնի կամավորների մասնակցությամբ	Տեղեկատվական եւ Էկոկրթության մակարդակի բարձրացում	«Երիտասարդ Ալավերդի» հկ

16	Հանդիպում Վրաստանում «Հողերի դեգրադացիայի մեղմացման և Հարավային Կովկասում աղքատության դեմ պայքարի համար հողային ռեսուրսների կայուն կառավարում» ծրագրի շրջանակներում	Կովկասի տարածաշրջանի հողերի դեգրադացիայի խնդիրների վերլուծություն, հողերի դեգրադացիայի խնդիրը Դեբեդ-Խրամի-Ալազանի-Յորի գետավազաններում	CENN, REC Caucasus, «Կանաչ արահետ» հկ
17	Առողջապահական դաշնթաց համայնքի բնակիչների համար «Շրջակա միջավայր եվ առողջություն» թեմայով	Տեղեկատվական եւ առողջապահական մակարդակի բարձրացում	համակարգող Ռուզաննա Միրզոյան
18	Սեմինար քննարկում «Հողերի դեգրադացիայի խնդիրը մեր տարածաշրջանում» թեմայով՝ շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ	Վրաստանյան այցի արդյունքների ներկայացում, քննարկում	համակարգողներ Ռուզաննա Միրզոյան, Անուշ Էվոյան
19	Սեմինար Երկրի համաշխարհային օրվա կապակցությամբ թեման՝ -«Պաշտպանենք մեր մոլորակը մշակույթի ծառատունկով» խորագրով միջոցառում Ալավերդու Ա. Պապոյանի անվ. գեղարվեստի դպրոցում՝ սաների եւ դասատուների մասնակցությամբ	Նպաստում շրջակա միջավայրի պահպանությանը, էկոլոգիայի մակարդակի բարձրացում	համակարգողներ Ռուզաննա Միրզոյան, Անուշ Էվոյան
20	«ՀՀ գյուղմթերքի ծանր մետաղներով աղտոտման ռիսկի գնահատում» ծրագրի շնորհանդեսը: Մասնակցում էին ալավերդու փոխքաղաքապետը, Ախթալայի քաղաքապետը, համայնքների ՏԻՄ ներկայացուցիչներ, ակտիվ քաղաքացիներ, առողջապահական հիմնարկների, ՋԼՄ եւ հկ ներկայացուցիչներ	Ծրագրի ընթացքում ուսումնասիրվելու է ծանր մետաղների առկայությունն եւ ռիսկերը Ալավերդի քաղաքում	ՀՀ ԳԱԱ-ն եւ էկոլոգանոսֆերիկ հետազոտությունների կենտրոնը
	Մայիս		
21	Հանդիպում կենտրոնում «Ուրբան կայուն զարգացման» հիմնադրամի ներկայացուցիչների հետ՝ «Վահագնի21», «Երիտասարդ Ալավերդի» ՀԿ ներկայացուցիչների հետ	«Հանրային կրթություն հանուն բարեկարգ միջավայրի» ծրագրի ներկայացում	Համակարգող Անուշ Էվոյան
22	Աշխատանքային հանդիպում «Արտակարգ	Արտակարգ իրավիճակների կառավարման պլանի	GTZ, «Կարմիր խաչ»,

	իրավիճակների կառավարման պլան» թեմայով՝ ՏԻՄ ներկայացուցիչների, հկ-ների մասնակցությամբ	կազմում	Լոռու մարզի Փ/Ծ
23	Աշխատանքային հանդիպում «Երիտասարդ Ալավերդի» հկ-ի հետ, որին մասնակցում էին քաղաքապետը, փոխքաղաքապետը, «Երիտասարդ Ալավերդի» հկ նախագահը եւ անդամները	AMECO հայտարարված դրամաշնորհային ծրագրի քննարկում «Շրջակա միջավայր» թեմայով եւ հայտի ներկայացում	Համակարգող Անուշ Էվոյան
24	Հանրային քննարկում «Անվտանգ միջավայր» ծրագրի շրջանակներում՝ ՏԻՄ մարմինների, մոնիտորինգի մասնագետների, ACP ընկերության ներկայացուցիչների, հասարակության մասնակցությամբ	Քննարկել մկնդեղի գերեզմանոցի ռիսկերը, ուսումնասիրել նյութերի պարունակությունը՝ մոնիտորինգը արդյունավետ իրականացնելու համար	Համակարգող Անուշ Էվոյան
	Հունիս		
25	Այցելություն մկնդեղի գերեզմանոց «Անվտանգ միջավայր» ծրագրի շրջանակներում՝ ՀՀ սեյսմիկ ծառայության մոնիտորինգ իրականացնող մասնագետների եւ «Անահիտ կանանց աջակցության» հկ ներկայացուցչի հետ	Ծանոթություն գերեզմանոցի սեյսմիկ անվտանգությունն ապահովող ճարտարապետաշինարարական կոնստրուկցիաների հետ	«Անահիտ կանանց աջակցության» հկ, Համակարգող Անուշ Էվոյան
26	Քննարկում «Ուրբան կայուն զարգացման» հիմնադրամի «Հանրային կրթություն հանուն բարեկարգ միջավայրի» ծրագրի համակարգողների հետ՝ հկ-ների եւ տեղական հառուստաընկերության եւ ՏԻՄ ներկայացուցիչների մասնակցությամբ	Աղբի տեսակավորման համար նախատեսված աղբարկղերի պատվիրում, տեղադրվող վայրի ընտրություն, բնակչության շրջանում անցկացվող հարցումների նախապատրաստական աշխատանքներ	Համակարգող Անուշ Էվոյան

Ալավերդու Օրիուս կենտրոն

Հեռ.՝ +374 253 2 41 12

համակարգողներ

Ռուզաննա Միրզոյան +374 91 76 12 13

Անուշ Էվոյան +374 91 19 93 24, +374 91 76 13 30

E-mail: info_alaverdi@aarhus.am

mirzoyan_ruzanna@mail.ru

anushevoyan@rambler.ru